

ԽՈՒՍԱՓՈՂ ՓԱՍՏԵՐ

Կեանքի խոշոր և աննշան փաստերը, նրա ամբողջութիւնը կազմող մանր ու մեծ պատահարները ժխորը շարժւում է և շտապով ծածկւում մեր աչքերից: Եւ նայելով, թէ մինչև որ աստիճան այդ փաստերը ցնցում են մեր ջղային համակարգութիւնը, տակնուվրալ անում մեր միտքը, մենք դրա համապատասխան չափով մտածկոտ, վշտացած, կամ յուզուած նայում ենք խուսափող երևոյթի յետևից և այնուհետև էլ ապրում նրա հետ յուշերով:

Եւ ճիշդան անգամ արտաքուստ թէև չնչին, բայց էութեամբ առաջնակարգ փաստեր, երևոյթներ, պատահարներ անցնում են աննկատելի կերպով արժէքների շփոթի մէջ: Մանր փաստերը... բայց կեանքը յաճախ հէնց նրանցից է կազմուած. նրանք են ղեկավար հանդիսանում մեր կենսական շահերին. նրանք են կրծում հասարակական կազմի շէնքը դանդաղ ու յամառ, մինչև որ փլուածքի դղորդը ցնցում և ուշքի է բերում մեզ՝ ուշացած ու անօգուտ ապաշաւանքի մէջ թաղելով մեր սիրտը:

Աւերածի մէջ աննկատելի պատճառներն ամենավտանգաւորներն են, և կեանքի մէջ աննշան համարուած երևոյթները յաճախ ամենակենսական, ամենաէականներն են: Նրանք են բնորոշում և գոյն տալիս ժամանակին:

Մեր իրականութեան մէջ, մեր միջավայրում ցոյց տալ հասարակական ծածուկ, կամ աննկատելի մնացած ցաւերը, մատնանիշ անէլ այն մանր փաստերը, որոնք փութով խուսափելու գերազանց յատկութիւնն ունեն—ահա այս յօդուածների նպատակը: Եթէ պատկերը կը լինի չափազանց մոայլ ու ճշող, եթէ հասարակական օրգանիզմը հանդէս կը գայ շարաւալից ու դարշելի պալարներով, եթէ երևոյթների խաբուսիկ արտաքինի տակից պլուխ կը բարձրացնեն հրէշաւոր այլանդակութիւններ, յանցանքը մերը չի լինի, այլ մեր ողբալի իրականութեանը: Մենք կ'ասենք միայն ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը, ինչքան և դառն լինի նա:

Ամուլ դասակարգը.—Տարիներ առաջ և այն՝ տասնեակ տարիներ, Գ. Արծրունին ողջունում էր բարձրագոյն կրթութիւն ստացած առաջին հայ կնոջ մուտքը մեր միջավայրը։ Եւ նա իրաւունք ունէր այդ փաստը ուշագրաւ և լուսաւոր համարելու, քանի որ առաջին անգամ ասիական խաւարի կաշկանդումից ազատուած հայ կինը ևրոպական գիտութեամբ զինուած՝ ոտք էր կոխում մեր երկիրը, ուր անելու այնքան բան կար։

Արդարացի կերպով կարծւում էր, որ մի նոր ժամանակաշրջան է սկսւում մեր կեանքում, ուր ինտելիգենտ հայ կինը առաջնակարգ դեր է խաղալու, մեր գունատ իրականութեանը փայլ տալով իր ջերմ սրտով, իր նրբագգաց բնաւորութեամբ, իր կանացիութեան ամբողջ հմայքով։ Գործունէութեան ասպարէզը չափազանց լայն էր. լեզու, գրականութիւն, գեղարուեստ, ընտանիք, կանանց ազատագրութիւն, դասակարգային խոշոր խնդիրներ—այս բոլորը սպասում էին մտածող գլուխներին, բարի ցանկութիւններին, յամառ, տոկուն պատրաստակամութեան։ Հայ կինը խոշոր դեր ունէր կատարելու, քանի որ այն՝ ինչ կարող է անել մի կրթուած կին, յաճախ անգոր է կատարել մի շատ անելի լաւ պատրաստուած տղամարդ։

Ահա թէ ինչո՞ւ էր ոգևորուած Արծրունին։

Այն ժամանակից տարիներ անցան. մենք տասնեակ բարձրագոյն կրթութիւն ստացած կանայք ունենք. Եւրոպայում համալսարանական քաղաք չկայ, ուր հայ ուսանողի կողքին նստած չլինի և հայ ուսանողուհին։ Հայ աղջիկն այժմ նոյնքան հեղուկութեամբ է դիմում գէպի Եւրոպա, որքան և հայ երիտասարդը։ Ազգային նահապետական կեանքը՝ և այս դէպքում, նոր հովերի առաջ լայն բացեց իր դռները. նա չվախեցաւ իր աղջիկ-զաւակը հազարաւոր վերստեղծվ մեն-մենակ, իրանից հեռու ուղարկել։

Հայը Թրք է խորշել օգտակար, լուսաւոր նորութիւնից։ Սա նրա խոշոր առաքինութիւններից մէկն է։

Եւ զնացին հայ օրիորդները Եւրոպա խմբերով. գնացին, ապրեցին և վերադարձան։

Արդիւնքը...

Այս վճռական հարցի առաջ ցնդւում է վարդագոյն պօէզիան և սկսւում է ամենաբանալ իրականութիւնը։ Խմբերով Եւրոպա դիմող հայ կանանց հետ կապուած յոյսերը լոկ պատրանքներ էին, որոնք օր աւուր լուծւում են վաղորդեան շա՛մանդաղի պէս, և իրականութիւնը երևան է հանում ամենազառն հասարակական յուսախարութիւն։

Հայ կրթուած կինը մինչև այժմ ոչինչ չտուեց իր ծննդավայրին, մեր անմխիթար և կարօտ իրականութեան: Նա միանգամայն անպէտք հանդիսացաւ: Մեր կեանքի վրայ նրա բարերար ազդեցութիւնը որևէ կերպով մինչև այժմ չարտայայտուեց: Մեր հասարակական կեանքի հորիզոնի վրայ և ոչ մի կանացի անուն չբարձրացաւ:

Այժմ ստեղծուել է կրթուած հայ կանանց մի ամբողջ դասակարգ, որին մենք չենք քաշուում անուանել՝ մտաւորապէս ամուլ և մեծ մասամբ հասարակական բնազդներէից զուրկ մի բազմութիւն:

Բարձրագոյն կրթութիւնը հայ կնոջ համար դարձաւ այն սովորական զարդերից մէկը, որոնց կարիք ունի կինը իր սինպլրանքի, իր կոկետութեան համար և նրանով նա նոյնքան հպարտ է, որքան իր ժամացոյցի ոսկէ շղթայով, կամ ադամանդազարդ մատանիներով:

Զարմանալի չէ, որ այս պայմաններում, նրա իդէալական ոգիտականը՝ մեծ մասամբ, վերջնականապէս կնքուում է աւելի կամ պակաս յաջող ամուսնութեամբ, որը՝ վրայ է հասնում ճիշտ ժամանակին, ձանձրալի և աննպատակ գոյութեան պարապը լցնելու համար:

Գեղեցիկ պօէմայի անհամ վախճանն է սա: Սրա համար արժէք միթէ Եւրոպա գնալ, այնքան եռանդ և դրամ մսխել:

Այս հարցը ոչ ոքի չի զբաղեցնում այլևս, երևոյթի բոլոր այլանդակ հակասութիւնը չի նկատուում, որովհետև վաղուց հետէ հասարակութիւնը սովորել է տեսնել հայ օրիորդներին չուն դէպի Եւրոպա, առանց նրանցից որևէ լուրջ բան ըստպասելու: Միջոցը՝ դարձել է նպատակ: Ամենքն էլ գոհ են, և՛ գնացնողները և՛ ուղարկողները:

Սակայն ձեր է պատճառը այս ցաւալի երևոյթի: Ի՞նչին պէտք է վերագրել կրթուած հայ կնոջ այս մտաւոր մնանկութիւնը: Ինչո՞ւ համար միայն մեր մէջ կրթուած կինը պիտի անկարող հանդիսանար որևէ հասարակական դեր կատարելու, գեղարուեստի, գրականութեան, գիտութեան և այլ ասպարէզներում:

Ահա հարցեր, որոնց լուսարանութիւնը կապուած է մի ամբողջ շարք ծանրակշիռ հանգամանքների հետ, և որոնք շօշափում են մեր ամենակենսական, ամենաբարձր հոգեկան շահերը:

Առ այժմ մի կողմ թողնենք աւելի ծանր պահանջները, ընդունենք, որ փիլիսոփայ, գիտնական, հանրածանօթ մասնագէտ հայ կինը դեռ մի անկարելիութիւն է, շնորհիւ շատ հաս-

կանալի պայմանների, որոնց վրայ տեղը չէ այստեղ ծանրանալու ճարտարական չէ սակայն, որ մինչև այժմ մի հատիկ տաղանդաւոր կին-գրող, կին-բանաստեղծ չունեցանք միջքան կրթուած օրիորդների մէջ։ Ինչու համար այս ընդհանուր ամլութիւնը։ Հնարաւոր է միթէ ենթադրել, որ բարձրագոյն կրթութեան հետամուտ են բացառապէս անտաղանդ, անշնորհ հայ աղջիկները։ Այսպիսի անհեթեթութիւն, անշուշտ, անկարելի է ընդունել. ամենապարզ արամբանութիւնը կը բողբոջէ դրա դէմ։ Նշանակում է կան այլ պատճառներ, աւելի լուրջ, աւելի ծանրակշիռ, քան այդ կարծւում է սովորաբար։

Մեր խորին համոզմունքով այս տխուր երեւոյթը պայմանաւորող հանգամանքները սխալ կը լինէր որոնել հայ օրիորդների անձնական յատկութիւնների, նրանց բնածին խառնուածքի, հոգեկան կարողութիւնների մէջ, այլ այդ բոլորից դուրս, արտաքին աշխարհում։ Հայ աղջիկը իր օտար ընկերուհիներից յետ չի մնայ ոչ ձիրքերով, ոչ աշխատելու պատրաստականութեամբ ու տոկունութեամբ և ոչ էլ եռանդով։

Այդ բոլորն ունի նա, շատ անգամ, յաւելուածով։ Բայց այնուամենայնիւ, նա՝ մեծ մասամբ, ինչպէս ասացինք, մնում է մտաւորապէս համր և ամուլ։ Նւ դա այն պարզ պատճառով, որ նա բարձրագոյն կրթութեան է դիմում միանգամայն առանց հարկ եղած բացիօնել, տրամաբանական և լուրջ պատրաստութեան։ Իր ժառանգական յատկութիւնների և ստացականի մէջ այնպիսի անտագոնիզմ է իշխում, որ վերջիվերջոյ նրա հոգում և գլխում ստեղծւում է մի արսուրդ։ Սովորում է տարիներ շարունակ, բայց մնում է միշտ տգէտ. տգէտ իր մայրենի լեզուի մէջ, տրգէտ իր ցեղի, իր անցեալի վերաբերմամբ, և որ ամենից տրտուրն է, նա չի՝ ճանաչում, չի հասկանում նոյնիսկ այն իրականութիւնը՝ որի մէջ ապրում է, այն ժողովուրդը, որից նա բղխել է։ Ազնիւ ու գեղեցիկ ներշնչումների իսկական և միակ աղբիւրը այսպիսով գոցւում է նրա համար։ Իսկ առանց ներշնչումների գրականութիւն և գեղարուեստ լինել չի կարող։ Մայր ցամաքից կտրուելով՝ նա կորցնում է աչքից նաև կղզին, դէպի ուր առագաստ էր բացել, և այնուհետև, տարւում է փոթորկոտ ծովերի վրայ անդեկ, աննպատակ։ մինչև իր կեանքի վերջը։ Օտար լեզուն և ոգին անկարող չլինում ըմբռնել անհրաժեշտ խորութեամբ և լայնութեամբ։ Սեփական լեզուն հազիւ թոթովում է։ Իր ժողովուրդը չի գտւում, որովհետև նրան չի ճանաչում, նրա յոյգերը և ցաւը ապրել չի կարողանում։ Նա ոչ այս է և ոչ այն։ Նա մի ոչնչութիւն է։ Այս պայմաններում զարմանալի չէ նրա հոգու ամլութիւնը. զարմա-

նալի չէ՛, որ նա անցնում է առանց որևէ հետք թողնելու մեր կեանքում, ուր կոչուած էր գործելու։ Նա՛ հասարակական տեսակէտից՝ աննպատակ ծախսուած, խելագարօրէն՝ վատնուած հարստութիւնն է։ Նա պղնձուած խոպան անապատն է, մեր առանց այն էլ անապատներով հարուստ կեանքի մէջ։ Բնութիւնը չի կարելի անապատիւ կերպով խելաթիւրել...

*

Հայ «Բայրընը».— Դուք չէք լսել անշուշտ, ընթերցող, բայց նա ծնուել է հայկական այդ Բայրընը։ Եւ, ինչպէս սովորաբար պատահում է՝ հսկայ մեծութիւններին, որոնք բարեհաճում են աշխարհ գալ մեր խելգծութիւնը միխթաբելու համար՝ հայ Բայրընը մնացել է տակաւին չգնահատուած և անծանօթ։ Նա հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն։ Բայց մնաց անծանօթ։ Այն ժամանակ նա զարմացած՝ զայրացած հասարակութեան առաջ շարտեյ իր դրաման։ Շըպլըրտեց և սպասեց։ Բայց սրբապիղծ ամբոխը ծնկաչոք չսողաց նրա ոտների տակ։... Անմիտ հասարակութիւնը մնաց խուլ և համր...

Հասարակական այս սև, չտեսնուած ապերախտութեան, ժամանակ է սակայն վերջ տալ։ Եւ մենք շտապում ենք յայտարարել, որ այդ անգիտուած հանճարը՝ ուսուցչի համեստ անուան տակ թաղնուած պ. Պաշտուր Բաբայեանն է։

Թող ների մեզ պարոնը մեր համարձակութիւնը, եթէ մենք պարտ զգացինք անել այս վիթխարի յայտնութիւնը։ Ուրվհետև, դուրս է գալիս, որ հասարակական այս անարդար վերաբերմունքի մէջ «Մուրճ»-ը խոշոր բաժին ունի։ Դոնէ այդպէս է երևում պ. Պ. Բաբայեանի մի հայհոյական գրութիւնից, որ նա ուղղել էր խմբագրութեանը։ Եւ միւս կողմից սարսափում ենք, որ չլինի թէ հանճարեղ երիտասարդը իր արդար զայրոյթի մէջ իր գրիչը փշրի (նա այդ սպառնում է !) և մենք մնանք յաւիտենական յանցաւորներ հայ ազգի առաջ։ Անկարելի ապուշութիւնների և փողոցային հայհոյանքների այն կոյտը, որ «բանաստեղծ» Բաբայեանը ուղղել է «Մուրճ»-ին՝ ի պատասխան նրա բանաստեղծութիւնների և դրամայի քննադատութեան, անշուշտ անհնարին է հրատարակել, գոնէ հասարակական ճաշակն ու խիղճը չվիրաւորելու համար։ Քաղենք այնտեղից այն գոհարները, որոնք վկայում են, թէ մենք իրօք մի հայ Բայրընի հետ գործ ունենք։ Դտնելով՝ որ «Մուրճ»-ի քննադատութիւնը արդիւնք է կրթի թելադրութեան, (հիմալի է, այնպէս չէ՛, մենք նախանձել ենք Պաշտուրի դափնիներին !) «հանճարեղ բանաստեղծը» բացազանչում է. «Ապուշներ... Եւ ի՛նչ

զարմանալու բան կայ, երբ մեզ պէս փոքր և անզարգացած ազգերի մօտ տեղի ունի նոյնը, ինչ որ աւելի սարսափելի և վառթար կերպով տեղի ունէր անգլիացիների պէս առաջադէմ ազգի մօտ, երբ առաջին անգամ էր գրական ասպարէզ իջնում Բայրընի պէս հանձարը»։ Այո, պ. Բաբայեան դուք կատարելապէս իրաւունք ունիք, բայց մոռացել էլ էք մի փոքրիկ մանրամասնութիւն—անգլիացի Բայրընը կաղ էր, իսկ դուք ասում են, շատ ուղիղ քայլում էք։ Ափսոս...

Բայց պ. Բաբայեան մեզ հետ համաձայն չէ։ Նա հաւատացած է, որ ինքը առանց կաղալու էլ Բայրըն է։ Եւ միութարում է իր վշտացած սիրտը նրանով՝ «որ մարդկանց արժանապէս պնդատում են յետագայ սերունդները նրանց մահից յետոյ, երբ անցնում է կրքի թագաւորութեան շրջանը, որ չի ուզում ուրիշի արժանիքը ճանաչել, կամ մեծութիւնը խոտտովանել»։

Ընթերցողը տեսնում է պարզապէս, որ մենք գործ ունենք մեծութեան մանիայով բռնուած մի մարդուկի հետ, և զարմանում է, որ մենք հարկ ենք դատել զբաղուել նրանով։ Բայց դժբախտութիւնն այն է, որ այս փաստը ընտրող է, որ գրչակների և երեխայամիտ գլուխների մի ստուար բազմութիւն՝ աւելի կամ պակաս չափով նոյն հիւանդութեամբ է բռնուած։ Փորձերը, որքան և նրանք խակ, անյաջող լինին, ինքն ըստ ինքեան դատապարտելի չեն կարող լինել։ Աւելին կ'ասենք, որքան շատ՝ այնքան լաւ. միշտ «բազումք են կոչեցեալք և սակաւք ընտրեալք»։ Բայց երբ իւրաքանչիւր սկսնակ, նորեկուկ, իրան Բայրըն է կարծում, երբ երկու տուն «ոտանաւոր» թխող տղէտը՝ քննադատութեան ձայնին, խորհրդին ականջ չենելու, սովորելու փոխարէն՝ անմիտ գոռոզութեամբ հանգչում է իր չվաստակած դափնիների վրայ, այստեղ արդէն ներողամտութեան խօսք անգամ լինել չի կարող։

Յանցմանք է գործում միթէ քննադատութիւնը, երբ տաղանդի մի յետին, կասկածելի նշոյլ չտեսնելով մի ամբողջ տետրակի մէջ, խորհուրդ է տալիս հեղինակին ձեռք վերցնել ոտանաւոր թխելուց և աւելի օգտակար աշխատանքի նուիրել իր ոյժերը։ Սա մի բարեմիտ, ուշադիր և բարեխիղճ վերաբերմունք է, որին այնպիսի տղէտ, սնամէջ մեծամտութիւններ, ինչպէս Բաբայաններն են, պատասխանում են ամենազուհիկ, ամենափողոցային, ամենաստորացուցիչ լուտանքներով, հայհոյանքներով։

Սա մի փաստ չէ, այլ մի ամբողջ երևոյթ։

Մենք ճանաչում ենք էջմիածնի ճեմարանի մի քանի դպրո-

ցականներ, որոնք թողել հեռացել են ուսումնարանը, գտնելով, որ այնտեղ այլևս սովորելու ոչինչ չկայ, որ ժամանակը հասել է գրականութեամբ զբաղուելու։ Եւ նրանք կը գործադրեն իրանց սպառնանքը։ Վաղը կը տան մեզ à la Բաբայեան «բանաստեղծութիւններ» այն էլ՝ առանձին հրատարակութիւններով...

Բայրընները այդպէս հեշտ չեն ծնւում։ Նրանք նախ և առաջ իրանց էպոխայի ամենակրթուած մարդն են լինում։ Տաղանդը՝ մի ծաղիկ է, որ փթթել կարող է միայն բազմակողմանի, խորը կրթութեան, լայն զարգացման հողի վրայ։ Տարաբախտաբար, ներկայ դէպքում, ոչ զարգացումը կայ և ոչ տաղանդը։

Իսկական բանաստեղծները նոյնիսկ իրանց առաջին փորձերի մէջ երևան են գալիս։ Եւ նրանք երբէք այդքան ապուշ մեծամտութիւնով ուրած չեն լինում, ինչպէս են Բաբայեանները։

*

Բարի խորհուրդներ.—«Մուրճի» և առ հասարակ հայ գրականութեան սրտացաւ, նախանձախնդիր բարեկամներն անթիւ են... խօսքով։ Խրատներ, խրատներ, բազմապիսի, խորախորհուրդ, իմաստուն, և որ գլխաւորն է՝ հեշտ իրագործելի։ Պէտք է ենթադրել, որ խմբագրութեան տարօրինակ յամառութիւնն է պատճառը, որ նա չկարողացաւ օգտուել այդ խրատներին և 5—10 հազար բաժանորդ, տասնեակ հազարների նախահաշիւ ունենալ։ Կամ գուցէ նա չգիտէ, թէ ի՞նչ են մտածում դրսում նրա բարեկամները «Մուրճի» առաջադիմութեան համար։

Իւրաքանչիւր ազնիւ հայ մարդ՝ իսկապէս պարտական է իր գիտցածներն ու լսածները շտապով հաղորդել խմբագրութեանը, որ նա այլ ևս անգէտ չձեւանայ։ Եւ կատարում եմ պարտքս։

Սօսակցութիւնը տեղի ունէր մի սեղանի շուրջ։

Սեղանակիցներից մէկն առանց հանաքի, ինչպէս Փրանսիացին կ'ասի՝ sans rire, եռանդով ապացուցանում էր, որ եթէ «Մուրճը» իր շահերը հասկանայ, պէտք է անմիջապէս սկսի հրատարակել իր էջերում... Աստուածաշունչը։

—Սա այն առաւելութիւնն ունի, պարոններ,—շարունակեց նա ազնիւ ոգևորութեամբ—որ նախ թերթը դրա համար հոնորար, տողավարձ վճարելու պէտք չի ունենայ և երկրորդ՝ որ գլխաւորն է, հայ ժողովրդի ցաւած սրտում վերջին ժամանակ ծագած կրօնական թերահաւատութիւնը վերստին կ'ամրապնդի և բարոյականութեան, առաքինութեան նուիրական ուղին կը

հարթի իր ընթերցողների առաջ: Եւ որքան բաժանորդներ կ'ունենայ, վերջացրեց նա ինքնաբաւական կերպով:

Մի ուրիշը՝ նոյնքան ազնիւ և սրտացաւ պարոն, իմանալով, որ «Մուրճ»-ը պոստին մեծ ծախս է վճարում, առաջարկեց մի վերին աստիճանի գործնական միջոց՝ ազատուելու այդ անպատեհութիւնից:

—Փոխանակ «Մուրճ»-ը պոստով ուղարկելու բաժանորդներին, լաւ չի՞ լինի վարձել մի քանի տասնեակ չարվադարի ձիեր և այդպէս կատարել էքսպեդիցիան...

—Հաստ է, շատ է հաստ այդ ամսագիրը, պարոններ—ասում էր մի այլ սրտացաւ բարեկամ—իհարկէ շատ ծախք կը լինի... ախր հայերին ի՞նչ կը սազի այդքան հաստ ամսագիր: Մենք պատիկ ազգ ենք. համեստ լինինք: Անհամեստութիւնը, գողոցութիւնը միշտ պատժոււմ է: «Մուրճ»-ը զոհ է դնում—և այդպէս էլ պէտք է—իր գողոց մեծամտութեան, իր անհամեստեան: Եւ որքան աւելորդ բան կայ այդ հաստ գրքի մէջ: Վերցնենք օրինակ վէպերը... Ասացէք խնդրեմ, ես ի՞նչ պարտական եմ ուրիշի երեակայած, յերկրած, սարքած ստերը կարդալ: Յետոյ, Վանայ նահանգի մասին... Ես ռւր, Վանն ռւր... Տառեխով փլան է միայն ինձ յիշեցնում թէ աշխարհում Վան կայ: Բանաստեղծութիւններ... տօ «մուրճը» պէտք է վերցնել և ուղղակի նրանց «քեալին» իջեցնել: Աշխարհում ի՞նչքան փխտութիւն կայ, այդ պարագայատարկապորտ ձրիակերների գլխից է դուրս գալիս: Բանաստեղծութիւններ... էլ ռը մէկն ասեմ: Իմ կարծիքով շատ լաւ կը լինի «Մուրճ»-ում տպել մի քանի մասնագիտական յօդուածներ միայն և ամիսը մի յիսուն երեսանոց տետրակ դուրս տալ: Այն ժամանակ, տեսնենք, այդքան ծախք կը լինի:

Մինչև վերջը լռութեամբ այս «բարի խորհուրդները» լսող մի երիտասարդ, յանկարծ ոտքի կանգնեց ու դիմեց վերջին խօսողին.

—Ո՛չ, դուք սխալոււմ էք՝ պարոն, սխալոււմ էք մանաւանդ բանաստեղծութեան մասին ձեր յայտնած տգէտ կարծիքի մէջ: Ես այդ թոյլ չեմ տայ ձեզ: «Մուրճ»-ը տուժում է, ոչ թէ բանաստեղծութիւնների շատութիւնից, այլ նրանց կատարեալ բացակայութիւնից, այո՛, կատարեալ բացակայութիւնից... Տուէք բանաստեղծութիւն, այո՛, իսկական բանաստեղծութիւն, և դուք կ'ունենաք բաժանորդներ: Բայց այդ խմբագրութիւնը անշնորք է տաղանդաւոր գրուածքները ջնկելու: Ապացոյց.—հնա. անցեալ օրը՝ ես տանում եմ նրանց մի ոտանաւոր, տանում եմ՝ ցաւելով թերթի վրայ. խոմ չի՞ կարելի, ճշդ-

մարիտ, թոյլ տալ: որ հայոց միակ ամաստեղը տուփի բանաստեղծութեան պակասութիւնից: Այն, տաճուած էմ, և ի՞նչ էք կարծում... մերժում են: Բայց եւ պահել եմ այդ բանաստեղծութիւնը իմ ծոցում և պիտի պահեմ, պաշտէմ: մշտական անարգանք, այդ ինքնահաւան խմբագրութեան: Ահա եւ կը կարդամ ձեզ նրա առաջին տունը, միայն առաջինը. մնացածը ինքներդ կարող էք գուշակել առանց կարդալու:

Ինքնախոս

Երկինքն հետք չիտ-չիտ տարաւ ունեւորը,
Բացաւ դարձան կարմրակամար կուպերը,
Աղջի, հերիք, իմ աչքի լոյս, եկ տանենք արօտ
Տրուգիկ տըխիլի գառինքը մեր ու այծերն:

Դատեցէք... վերջացրեց նա մի հպարտ հայեացքով ընդգրկելով սասանուած բաղմականներին:

Դժբախտ արեւելքը շատ իմաստուն առածներ ունի, որոնցից ինքը երբէք չի օգտուել: Յիշում եմ դրանցից մէկը. «Որբին խրատ տուող շատ կը լինի, բայց հաց տուող՝ ընաւ»:

*

Բերանից մինչեւ ականջ.— «Արարատի» վերջին համարում Ատրպատականի նախկին առաջնորդ, «Աշխարհի դատաստանի» հեղինակ՝ տէր Նղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեան սէր է քարոզում, աւետարանական սէր...

Չգիտեմ ուրիշներն ի՞նչպէս, բայց եւ կարդալով այդ սիրազեղուն, հոգեպարար յօդուածը՝ ակամայ յիշեցի այն մի քանի թաւրիգիներին, որոնց ամիսներ առաջ պատահել էի դիպուածով: Նրանք վշտացած սրտի դառնութեամբ խօսում էին իրանց փակ դպրոցի, իրանց փողոցն ընկած զաւակների մասին:

— Ծայրագոյն դժբախտութիւն եղաւ, պարոն, ծայրագոյն խայտառակութիւն մեր խեղճ դպրոցի գլխին, ասում էր նրանցից մէկը:

— Այդ բոլոր գնդգամները մենք շատ լսեցինք, ասացի, այժմ ժամանակ է մտածել դպրոցը վերաբացելու մասին:

— Հենշտ է ասել, բայց ցաւն էլ այն է, որ չենք կարողանում բաց անել, նա՛ արդարն ենք ասում, այնպէս է փակել, որ էլ չենք կարողանում բաց անել. էլ իրար չենք հասկանում... Ծայրագոյն խայտառակութիւն...

Նա-ն տէր Նղիշէ ծայրագոյն վարդապետն էր:

Արդար լինինք. գուցէ Նղիշէ վարդապետի վրայ բարդուած մեղադրանքները մասամբ չափազանցութիւն են, գուցէ

մեր տեսած մարդիկ նրա հակառակորդներից էին: Բայց, այնուամենայնիւ, իբրեւ անհեղքների փաստ է մնում այն՝ որ Լիւլաւայի դպրոցի փակման առիթ տուող կռիւների մէջ Նդիշէ վարդապետը կուտող կողմերից մէկն էր, և ասում են, ամենահռահողունը: Այն աւերիչ եռանդը և այս սիրոյ քարոզը բղխում են միևնոյն սրտից: Անշուշտ «փոքրիկ» հակասութիւն կայ երկսի մէջ, որ Նդիշէ վարդապետները միշտ կարողանում են հաշտեցնել: Իսկ հասարակական կարծիքը միշտ bon enfant, հեշտութեամբ է ժողանում անցեալը: Ահա ինչո՞ւ կազ ու կուռի հեղինակը կարողանում է այժմ սէր քարոզել: Բայց ո՞վ ժամանակ ունի գնալ նրա բերանից մինչև ականջը չափել և միևնոյն շրթունքների վրայ սիրոյ և ատելութեան քարոզի հանելուկը լուծել...

*